

ԱՌԱՋԱԲԱՆ

Քսաներրորդ դարի 80-ական թվականների վերջում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակը՝ Մայիտակի երկրաշարժ, Արցախյան ազատամարտ, Հայաստանի անկախացում, երկրի տնտեսությունում, մարդկանց ներաշխարհում և կացութաձևում կատարված փոփոխությունները էական ազդեցություն են ունեցել բնաշխարհի և մարդկային հասարակայնության փոխհարաբերությունների վրա:

Մայր բնաշխարհը վերածվել է միայն շահույթի ձեռք բերման միջոց: Մարդը տարանջատվել է բնությունից և վերածվել բնության անխնա շահագործողի:

Գրքի մտահաղացումը և տպագրումը ուղղված է մի նպատակի՝ ուղիներ փնտրել, մարդու և բնության փոխհարաբերություններում առկա անմխիթար վիճակի բարելավման, մեր կեցավայրի և մայր բնության անաղարտության վերականգման, մարդու կողմից բնությանը հասցված վերքերի ապաքինման, ելք որոնելու՝ մեր մտածելակերպը, մոտեցումները և ապրելաձևը վերափոխելու և մարդու փրկությանը ու պահպանության համար:

Խնդիրը բարդ է, բայց ոչ անիրագոծելի: Ելքը միակն է՝ պահպանել Արարչի կողմից մարդուն տրված կերպարը, ապրել համապատասխան Տիրոջ կողմից մարդուն տրված պատվիրանների:

Պետք է գիտակցենք և հասկանանք, որ պատվիրաններից յուրաքանչյուր շեղում դա մեղք է, որի համար մարդը պատժվում է:

ԲՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՄԻՐ ԳԻՐՔԸ

Մայր բնությունը, ինչպես մարդը, որպես բնության մի մասնիկ, Աստվածածին են՝ Արարում:

Բնությունը բարդ ու օրինաչափ երևույթների համակեցություն է: Բնությունը օժտված է վերականգնողական և ինքնբնաբրման բացառիկ ունակությամբ: Մարդու և բնության ներդաշնակ համակեցությունը տանում է մարդու հոգևոր ու մտավոր աշխարհների համահունչ զարգացմանը, այսինքն այդ զարգացումները նպաստում են նաև բնության հզորացմանն ու ամրապնդմանը, որը Աստվածահաճո է:

Բնությունը հրապուրիչ ու գեղեցիկ է իր բազմազանությամբ և անկրկնելիությամբ: Կենսաբազմազանությունը՝ բուսական և կենդանական աշխարհը, բնության մեծագույն հարստությունն է, նրա իմաստը և կյանք հասկացության կրողը: Բնական մյուս երևույթները Արարվել են կյանք պահպանման, բազմացման և տարածման նպատակով: Բնության մեջ պատահականություն, ավելորդություն չի լինում, ամեն ինչ նպատակային է Արարվել և ունեւ իրենց յուրահատուկ դերն ու նշանակությունը: Բնական այդ օրինաչափությունից յուրաքանչյուր շեղում, տանում է բնության անաղարքության խեղաթյուրման, էկոհամակարգերի քայքայմանը:

Մարդը չնայած բնության մի մասնիկն է, բայց իր կենսագործունեությամբ, որը բխում է մարդու բնույթից՝ նյութական մարմնի հարաճուն կարիքների անվերապահ բավարարում, անխոհեմորեն վատնում է բնության կենսապաշարները, լուրջ ներգործություն է ունենում էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա, խախտում է բնության անաղարքությունը, փոխում բնական երևույթների օրինաչափ ընթացքը, նրա վերականգնողական ունակությունները, որի հետևանքով խորը փոփոխություններ են կատարվել բնական երևույթներում և այն բուժերանգի նման շրջվել է մարդու դեմ:

Մարդածին գործոնները էապես վատացրել են վայի կենդանական և բուսական տեսակների կենսապայմանները, որի արդյունքում ժամանակի ընթացքում ֆաունայի և ֆլորայի բազում տեսակներ ոչնչացել են կամ ներկայումս գտնվում անհետացման եզրին:

Ասվածի վառ ապացույցն է 2010 թվականին լույս տեսած << Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր Գիրք>>-ը և Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրք>>-ը:

— իրական փաստերով վերլուծենք Երկիր մոլորակի համար շատ փոքր մի տարածքում՝ Հայաստանի Հանրապետությունում և Արմավիր մարզում, վերջին քսան տարիների ընթացքում բուսական և կենդանական աշխարհում տեղի ունեցած փոփոխությունները:

ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ
/ՖԼՈՐԱ/

Բարդ, բազմազան ու խորհմաստ է բուսական աշխարհը:Երկիր մոլորակի վրա մարդու, կենդանական աշխարհի մյուս ներկայացուցիչների և ընդհանրապես կենսոլորտի գոյությունը պայմանավորված է բույսերի քլորոֆիլ պարունակող բջիջներում ընթացող յուրահատուկ երևույթով, որը կոչվում է ֆոտոսինթեզ: Բջջի կորիզում՝ քլորոպլաստների գրանների մեջ ներկառուցված քլորոֆիլի մոլեկուլները, այդ բնական միկրոսկոպիկ լաբորատորիաները, արեգակնայի ճառագայթների էներգիայի ազդեցության տակ պարզ անօրգանական միացություններից սինթեզում են բարդ օրգանական նյութ և արտադրում կենդանի բնության գոյատևման պարտադիր էլեմենտը՝ թթվածինը:

Այսինքն, նախախնամությունը երկիր մոլորակի վրա կենդանի բնության պահպանման մենաշնորհ պարզել է բուսաշխարհին: Այդ իսկ տեսակետից բույսերի հանդեպ մարդու կողմից առանձնահատուկ մոտեցումներ է պահանջում՝ նրանց տեսականու խորությամբ ուսումնասիրման, բազմազանության պահպանման, բազմացման, խնամքի և տարածման տեսակետից:

Մարդու կողմից ներկայումս հայտնաբերված է ավելի քան 200 հազար բուսատեսակներ:Անհրաժեշտ է նշել, որ մարդը բուսաշխարհի տեսականու շատ չնչին մասն է ուսումնասիրել և բացահայտել ֆլորայի գաղտնիքները և մարդու համար օգտակար տեսակները: Ներկայումս մարդը օգտագործում է առկա բուսատեսակների միայն մեկ տոկոսը:

Ծանոթ չլինելով, չիմանալով երկրի ֆլորայի ողջ էությանը, մարդը իր գործունեությամբ լուրջ վնասներ է պատճառել բուսաշխարհին: Հազարամյակների ընթացքում բնության կողմից ստեղծված բուսատեսակների զգալի մասը՝մարդու անխոհեմ գործունեության հետևանքով, ոչնչանում, անհետանում են երկրի երեսից:

_ Բնապահպանների ուսումնասիրությունները վկայում են, որ 21-րդ դարեսկզբին բուսական աշխարհի ավելի քան 20 հազար տեսակներ, այսինքն՝ֆլորայի շուրջ 10 տոկոսը, ոչնչացել են կամ գտնվում են անհետացման եզրին:

Մեր Հանրապետությունում հաշվարկված են բարձրակարգ բույսերի ավելի քան 3600 տեսակներ, որոնցից 180 տեսակները էնդեմներ են, այսինքն աճում և բազմանում են միայն մեր հայրենիքում՝ մեր հայրենի բնության մենաշնորհն են:

Բուսական աշխարհում ստեղծված տազնապալի իրավիճակի հավաստիությունը՝ մեր Հանրապետության և Արմավիրի մարզի օրինակով, բերվում է թվական տվյալներով:

2010 թ.լույս տեսած << Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրք>>-ը, որը հաստատվել է ՀՀ կառավարության 29.01.2010 թ. թիվ 72-Ն որոշմամբ, ներառնվել են 452 տեսակի բույսերի և 40 տեսակի սնկերի նկարագրություն: Բացի դրանից, Կարմիր գրքում ներկայացվել է ևս 223 բուսատեսակների մասին տեղեկատվություն, որոնց վիճակը մտահոգիչ է:

Այսինքն, Հայաստանի Հանրապետությունում ոչնչացել կամ ոչնչացման եզրին են հայտնվել առկա բուսատեսակների շուրջ 19-ը տոկոսը, որը երկու անգամ բարձր ցուցանիշ է՝ համեմատած ամբողջ երկրագնդի փաստացի իրավիճակի հետ: Բերված տվյալները վկայում են, որ մեր հանրապետությունում բուսաշխարհի տեսակների պահպանման

համար առավել վատ ու վտանգավոր պայմաններ կան: Այս փաստը պետք է բոլորիս մտահոգի, այն կարևոր հիմնախնդիր է, որը անհապաղ լուծում է պահանջում:

Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված 675 բուսատեսակների տրվել է՝ հետևյալ կատեգորիաները.

141 տեսակը գնահատվել է <<Կրիտիկական վիճակում գտնվող>>,

248-ը՝ <<Վտանգված տեսակ>>,

63-ը՝ <<Խոցելի տեսակ>>,

21-ը՝ <<Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ>>,

96-ը՝ <<Տվյալների անբավարարություն>> և

106-ը՝ <<Քիչ մտահոգող>>կատեգորիային:

1987 թվականին լույս տեսած Կարմիր գրքում ներառված էին 387 բարձրակարգ բուսատեսակներ:Այսինքն, եթե սնկերի քանակը չհաշվենք /1987թ.Կարմիր գրքում սնկերի հաշվառում չի կատարվել/,վերջին քսան տարիների ընթացքում վտանգված բուսատեսակների քանակը ավելացել է 248 տեսակով կամ 64 տոկոսով: Առավել վատթար պատկեր ստեղծվել է Արմավիրի մարզի տարածքում.

Այսպես, եթե 1987 թվականին լույս տեսած <<Հայկական ՍՍՀ Կարմիր գիրք>>-ը իր մեջ ներառել էր Արմավիրի մարզի տարածքում տարածված միայն յոթը բուսատեսակներ՝**Խնկեղեգ ճահճային, Բիեներցիա շուրջաթև, Գազ տարօրինակ, Ջրահարս փոքր, Կարմրան ութառեջ, Բորակաթուփ Շոբերի և Ֆրանկենիա փոշեպատ**, ապա 2010 թվականին այդ բուսատեսակների քանակը քառապատկվել է՝ հասել **27-ի**, որոնցից 3-ը գնահատվել է <<Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ>>, 20-ը՝ <<Վտանգված տեսակ>> և 4-ը՝ <<Խոցելի տեսակ>>

Կից ներկայացնում ենք այդ բուսատեսակների անվանումը, կենսաբանական համառոտ տեղեկություն և տարածման վայրերը.

1.Խնկեղեգ ճահճային–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Խնկեղեգազգիներին պատկանող, մինչև 1.5 մ. բարձրության, բազմամյա խոտաբույս է: Բույսը ունի հաստ ու սողացող կոճղարմատներ և երկար մազարմատներ, , տերևները՝ թրանման, տափակ-գծային, կանաչա դեղնավուն երանգավորմամբ: Ծաղկաբույր՝կողր, ծաղիկները՝մանր, երկսեռ, պտուղը՝չոր հատապտուղ:Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 900-1300 մ.մարձրությունների վրա, գետերի, ջրատարների ափերին, ճահիճներում: Բազմանում է կոճղարմատներով և սերմերով:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում:

Արմավիրի մարզի տարածքում աճում է **Ծաղկունք, Հայկաշեն, Փարաքար** համայնքների շրջակայքում:

Հայաստանի Հանրապետությունում այն հայտնի է նաև Արարատի մարզի Արևշատ և Միսյան համայնքների վարչական տարածքներում:

Աճելավայրերը գտնվում են ոչնչացման սպառնալիքի տակ:

Բուսատեսակի տարածման արեալը ընդրկում Կովկասը է մասնավորապես Արևմտյան, Արևելյան և Հարավային Անդրկովկասը, աճում է Եվրոպայում, Ասյայում, Միբիրում, Հեռավոր Արևելքում և Հյուսիսային Ամերիկայում:

Դեղաբույս է, օժտված է անտիսեպտիկ՝ հականեխիչ, հատկությամբ:

Վտանգված բուսատեսակ է:

2.Սիբեխ սիբեխանման–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Հովանոցավորներ ընտանիքին պատկանող, երկամյա, թույլ ճյուղավորվող՝30-50 սմ. բարձրության, խոտաբույս է, տերևները կաշենման:Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում, տարածված է եղել Գիլի լճի և Արարատ ավանի շրջակայքում:

Արմավիրի մարզում հայտնի է **միայն Ակնալիճ** համայնքի վարչական տարածքում:

Աճում է ստորին լեռնային գոտում՝800-1000 մ. բարձրությունների վրա, աղակալված հողերում, ճահիճներում և խոնավ մարգագետիններում:

Այս բուսատեսակը տարածված է նաև Անատոլիայում և Արևմտյան Իրանում:

Կիտիկական վիճակում գտնվող բուսատեսակ է:

3.Նարդես Շովիցի–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Հովանոցավորներին պատկանող, բազմամյա, բարակ ցողուններով՝մինչև 50 սմ. բարձրության, խոտաբույս է: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Երևանի և Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջաններում, այն հայտնաբերվել է Երասիս և Խաչիկ գյուղերի վարչական տարածքներում

Արմավիրի մարզում հայտնի է միայն **Քարակերտ համայնքի վարչական տարածքում**:

Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում՝800-1800 մ. բարձրություններու վրա, աղակալված, չոր կիսանապատային և տափաստանային, քարքարոտ լանջերին:

Բուսատեսակը տարածված է նաև Նախիջևանում, Անատոլիայում, Իրանում, Միջին Ասիայում և Աֆղանստանում:

Խոցելի բուսատեսակ է:

4.Վարդասերեփուկ Իլյինի–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Բարդածաղկավորներին պատկանող, միամյա, երբեմն անցողուն՝ 2-15 սմ. բարձրության, բույս է: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

Հայաստանի Հանրապետությունում աճում է միայն Երևանի/Վեդի, Դաշտաքար, Երասիս/ և Մեղրու /Նախիջևանի սահմանին մոտ/ ֆլորիստիկական շրջաններում:

Արմավիրի մարզի տարածքու կարող է հաղիպել **Երևան քաղաքին հարակից տարածքներում**:

Հայաստանում աճում է ստորին լեռնային գոտում՝700-1000 մ.բարձրությունների վրա, քարքարոտ լանջերին, Էֆեմերա-աղածաղկային կիսանապատային՝ երրորդական դարաշրջանի ծագման կարմիր կավերին:

Այս բուսատեսակը հանդիպում է նաև Նախիջևանում, Արևելյան Անդրկովկասում, Հյուսիսարևմտյան Իրանում և Թուրքմենիայում:

Վտանգված բուսատեսակ :

5.Ազագու օշինդրանման–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Բարդաձաղկավորներին պատկանող, բազմամյա՝ մինչև 60 սմ. բարձրության, խոտաբույս է:Ցողունը գլխամասում հուրանաձև ճյուղավորված, տերևները՝ երկարավուն, եզրերը՝ անհավասար սղոցանման, ծաղկազամբյուղները ձևավորվում են տերևածոցերում՝ մանր ու ձվաձև, դժգույն դեղին գունավորմամբ, հզոր ու խիտ մազաբմախոտներով: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Հայաստանում աճում է ստորին լեռնային գոտում՝ 700-800 մ.բարձրությունների վրա, առուների ափերին, խոնավ վայրերում ու ձորակներում:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում:

Հայտնի է եղել միայն Արմավիրի մարզի **Լուկանիշ** համայնքի վարչական տարածքում:

Այս բուսատեսակը տարածված է նաև Նախակովկասում, Արևմտյան և Կենտրոնական Անդրկովկասում, Թալիշում, Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Կենտրոնական և Արևելյան Ասիայում:

Վտանգված բուսատեսակ է:

6.Տերեփուկ Թախտաջանի–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Բարդաձաղկավորներին պատկանող, ճյուղավորված և կանգուն ցողուններով, բազմամյա խոտաբույս է: Տերևները՝ նեղ գծային, առանց կոթունների: Ծաղկազամբյուղը՝ դեղնավուն գունավորմամբ, ձևավորվում է ճյուղեր գազաթին՝ միայնակ:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Շիրակի ֆլորիստիկական շրջանում:Հայաստանի էնդեմիկ է:Հայտնի է մեկ ֆլորիստիկական շրջանում՝ հազվադեպ հանդիպող տեսակ է, սահմանափակ տարածքներում:

Տարածված է եղել միայն Արտենի լեռնագագաթի հարևանությամբ տեղադրված **Քարակերտ, Արտենի, Հակկո, Չարինջա, Ցամաքասար, և Հացաշեն գյուղերի միջև ընկած հողատարածքներում:**

Բուսատեսակը աճում է 1600-1800մ բարձրությունների վրա, չոր քարքարոտ լանջերում, տափաստանում, անմշակ հողատարածքներում և ցանքերում:

Կրիտիկական վիճակում գտնվող բուսատեսակ է:

7.Կղմուխ Օշեի–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Բարդաձաղկավորներին պատկանող, 15-60սմ.բարձրության, դժգույն-կանաչ գունավորմամբ, կոճիկավոր՝ գորտնուկանման, թմբուկներով ծածկված, հանգուցավոր կոճղարմատ ունեցող, մսալի տերևներով, բազմամյա խոտաբույս է:Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս- սեպտեմբերին:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում/Արարատ և Մասիս համայնքների շրջակայք, Երասխի լեռնաշղթա/, նախկինում աճել է նաև Իջևանի և Զանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում:

Արմավիրի մարզի տարածքու հայտնի է եղել **Երևան քաղաքին հարակից տարածքներում:**

Աճում է ստորին լեռնային գոտում՝ 500-1000մ բարձրությունների վրա, խոնավ աղուտներում, հանքային աղբյուրների մոտ:

Այս բուսատեսակը տարածված է նաև Նախիջևանում, Անատոլիայում և Արևմտյան Իրանում:

Վտանգված բուսատեսակ է:

8.Նվարդակ քնարաձև-Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Խաչածաղկավորներին պատկանող, 20-60 սմ. բարձրության, չոված ճյուղավորմամբ ցողուններով, բազմամյա խոտաբույս է:Ցողունների վրա ձևավորվող տերևները կաշենման են՝գծային, որոնք շուտ չորանում են, իսկ ստորին տերևները՝ քնարաձև-փետրաձև:Ծաղիկները սպիտակ պսակաթերթերով: Պտուղը պատիճ է՝ձվաձև կամ էլիպսաձև:Ծաղկում է մայիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Երևանի/Ջրվեժ, Նորք, Դալմայի այգիներ/ և Դարեղեգիսի/Ջերմուկ/ ֆլորիստիկական շրջաններում:

Արմավիր մարզում հայտնի է **Փարաքար, Խորոնք, Ակնաշեն և Ակնալիճ** համայնքների վարչական տարածքներում:

Աճում է ստորին և միջին լեռնային գոտում՝ 800-1800 մ. բարձրությունների վրա, չոր քարքարոտ, խճոտ, ժայռոտ բլրալանջերին:

Այս բուսատեսակը տարածված է նաև Նախիջևանում, Հյուսիսարևելյան Անատոլիայում և Հյուսիսարևմտյան Իրանում:

Վտանգված բուսատեսակ է:

9.Օվձվուկ անապատային–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Մեխակազգիներին պատկանող, 30-80 սմ.բարձրության, բազմամյա բույս է:Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ հունիսին:

Աճում է ստորին լեռնային գոտում՝ 800-1000մ. բարձրությունների վրա, չոր բլրալանջերին, աղակալած ճահիճներում և կիսանապատներում:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Երևանի/ Արարատ համայնքի և Ազատի ջրամբարի շրջակայքում/ և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Արմավիրի մարզի տարածքում կարող է հայտնի է **Երևան քաղաքին հարակից տարածքներում**:

Այս բուսատեսակը տարածված է նաև Հյուսիսարևելյան Անատոլիայում և Հյուսիսային Իրանում:

Վտանգված բուսատեսակ է .

10.Բիեններցիա շուրջաթև-Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Թելուկազգիներին պատկանող,15-40սմ. բարձրության, մերկ, բաց կանաչ գույնի, ցողունի հետ ներաճած, աղեղնաձև կորացած, բուրբ, գլանաձև տերևներով, երկսեռ ու վարսանդավոր ծաղիկներով, ափսեանման պտուղներով ,սուկուլենտ, միամյա բույս է:Ծաղկում է հուլիս-սեպտեմբեր ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին:

Հայաստանում տարածված է ստորին լեռնային գոտում՝ 800 – 1000մ.բարձրությունների վրա, փոքրոշ և խոնավ աղուտներում:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում/Արարատ, Երասխ, Մասիս/ :

Արմավիր մարզում աճում է միայն **Երասխահուն** համայնքի վարչական տարածքում:

Բացի Հայաստանից այս բուսատեսակի տարածման արեալը ընդգրկում է Նախիջևանը, Արևելյան Անատոլիան, Հարավարևմտյան և Կենտրոնական Ասիան, Եվրոպայի հարավը և Արևելյան Անդրկովկասը:

Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է:

11. Աղածաղիկ կուլպական-Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Թելուկազգիներին պատկանող, 10-30սմ. բարձրության, հերթադիր տերևներով ու ընձյուղներով, միամյա բույս է: Ծաղկում է մայիսի վերջից մինչև հուլիսի վերջը, պտղաբերում՝ հուլիսից-սեպտեմբեր:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում/Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերում/:

Հայտնի է **Արմավիրի մարզի ամբողջ տարածքում**:

Տեսակը տարածված է Դաղստանում, Նախիջևանում, Հյուսիսարևելյան Անատոլիայում, Հյուսիսային Իրանում և Արևելյան Անդրկովկասում:

Վտանգված բուսատեսակ է:

12. Սարսազան կոնաձև-Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Թելուկազգիներին պատկանող, 15-70սմ. բարձրության, բազմամյա, սուկուլենտ կիսաթուփ է: Միամյա ընձյուղները մոխրականաչ երանգավորմամբ՝ հատվածավոր-երիկամաձև, հակադիր փռված: Ծաղկում է հուլիս- օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում:

Արմավիրի մարզում տարածված է **Արագափ, Մարգարա, Երասխահուն և Էջմիածին** համայնքների վարչական տարածքներում:

Հայաստանի Հանրապետությունում այս բուսատեսակը հանդիպում է նաև Երասխում: Հայաստանում աճում է ստորին լեռնային գոտում՝ 850 – 900 մ.բարձրությունների վրա, ուժեղ աղակալած փորփոշ և խոնավ աղուտներում:

Այս տեսակը հանդիպում է նաև է Նախիջևանում, Եվրոպայի հարավում, Անատոլիայում, Իրանում, Կենտրոնական Ասիայում և Հյուսիսային Աֆրիկայում:

Վտանգված բուսատեսակ է:

13. Աղահասկիկ Բելանժեի-Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Թելուկազգիներին պատկանող, 100-150/200/ սմ. բարձրության, կարճ բնիկով, ուղիղ կազնած, հակադիր, մսալի և հատվածավոր գորտնուկավոր ընձյուղներով, սուկուլենտ թուփ է: Տերևները՝ ձուլգ-գուլգ, սերտաճած ու թեփանման: Ծաղկում է հուլիս- օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում:

Արմավիր մարզում հայտնի է **Մարգարա, Երասխահուն և Արագափ** համայնքների վարչական տարածքում:

Հայաստանի Հանրապետությունում աճում է նաև Երասխում:

Հայաստանում տարածված է ստորին լեռնային գոտում՝ 800 – 900 մ.բարձրությունների վրա, ուժեղ աղակալած փորփոշ կամ չոր աղուտներում:

Հայաստանի Հանրապետությունից բացի տարածման արեալը ընդգրկում է Նախիջևանը, Եվրոպայի հարավը, Անատոլիան, Իրանը, Միջին և Կենտրոնական Ասիան, Արևելյան Նախակովկասը, Կենտրոնական և Արևելյան Անդրկովկասը, Պակիստանը և Չինաստանը:

Վտանգված բուսատեսակ է:

14. Կալախոտ կասպիական–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Թելուկազգիներին պատկանող, 15-75սմ. բարձրության, մոխրականաչ, հերթադիր, հատվածավոր ընձյուղներով, կոճղարմատավոր կիսաթուփ է: Տերևները՝ հերթադիր, ներքև սահող, ցողունազիրկ, սրածայր, մսալի թմբուկների ձևով: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում

Արմավիրի մարզում հայտնի է **Մարգարա, Երասխահուն, Էջմիածին և Արագածի** համայնքների վարչական տարածքներում:

Հայաստանի Հանրապետությունում աճում է նաև Երասխում:

Հայաստանում տարածված է ստորին լեռնային գոտում՝ 800 – 900 մ.բարձրությունների վրա, փոքրիկ աղուտներում

Հայաստանի Հանրապետությունից բացի տարածված է Նախիջևանում, Արևելյան Անատոլիայում, Իրանում, Աֆղանստանում, Թուրքմենստանում, Մոնղոլիայում և Ջունգարիայում, Միջին և Կենտրոնական Ասիայում, Արևելյան Նախակովկասում, Արևելյան Կովկասում:

Վտանգված բուսատեսակ է:

15. Օշան Օշեի–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Թելուկազգիներին պատկանող, 20-40սմ. բարձրության, կարճ, փայտացած, ճյուղավորված ու կոտրատվող դեղնականաչավու երանգավորմամբ, միամյա ընձյուղներով, կիսաթուփ է: Բույսը ամբողջությամբ ծածկված է կարճ ու ուղիղ առսեղմ մազիկներով: Տերևները՝ 20-25 սմ. երկարության, կիսազլանիկանման: Ծաղկում է հուլիս-սեպտեմբեր ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում:

Արմավիր մարզում հայտնի է միայն **Շահումյան** համայնքի վարչական տարածքում:

Հանրապետությունում աճում է նաև Ջովաշեն, Վեդի, **Արևշատ**, Երասխ համայնքների տարածքներում և Երասխ լեռնաշղթայի վրա:

Բուսատեսակը աճում է ստորին լեռնային գոտում՝ 800 – 1200մ. բարձրությունների վրա, քարքարոտ, գիպսակիր, կավային և չոր աղակալված լանջերին և կիսանապատային գոտուն հարիր պայմաններում

Հայաստանի Հանրապետությունից բացի տարածված է Նախիջևանում, Հյուսիսային Իրանում, Աֆղանստանում և Թուրքմենստանում:

Վտանգված բուսատեսակ է:

16. Օշան սողակիր–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Թելուկազգիներին պատկանող, 10-70սմ. բարձրության, միամյա սուկուլենտ բույս է: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում:

Արմավիրի մարզում հայտնի է միայն **Երասխահուն** համայնքի վարչական տարածքում: Հանրապետությունում աճում է նաև Երասխում:

Բուսատեսակը աճում է ստորին լեռնային գոտում՝ 800 – 1200մ. բարձրությունների վրա, քարքարոտ, գիպսակիր, կավային և չոր աղակալված լանջերին և կիսանապատային գոտուն հարիր պայմաններում

Այս տեսակը տարածված է Նախակովկասում, Դաղստանում, Կենտրոնական և Հարավային Եվրոպայում, Անատոլիայում, Իրանում, Փոքր և Արևելյան Ասիայում և Հյուսիսային Աֆրիկայում:

Վտանգված բուսատեսակ է:

17.Օջան Թամամշյանի–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Թելուկազգիներին պատկանող, հիմքից ճյուղավորվող, սպիտակավուն ակուններ ունեցող, բաց կանաչավուն ցողուններով, թելանման – գծային, մերկ, փշոտ տերևներով միամյա բույս է: Ծաղկում է հուլիս-սեպտեմբեր ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին:

Բուսատեսակը աճում է ստորին լեռնային գոտում՝ 700-1000 մ.բարձրությունների վրա, անապատում և կիսանապատում,ավազային և գիպսակիրկարմիր կավերի վրա:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում

Արմավիրի մարզում հայտնի է **Էջմիածին /Զվարթնոց/** և **Արմավիր** համայնքների վարչական տարածքներում:

Հանրապետությունում աճում է նաև Երասխ, Գոռավան համայնքների և Երևան քաղաքի շրջակայքում:

Այս տեսակը տարածված է Նախիջևանում և Իրանում /Ուրմիա լճի ավազանում/:

Վտանգված բուսատեսակ է:

18.Օջան թաղիքային–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Թելուկազգիներին պատկանող, 10-30 սմ. բարձրության, փոված կամ կանգուն ցողուններով, մոխրագույն կիսաթուփ է: Ցողունները և տերևները ծածկված են լինում կիսասեղմ, խորդուբորդ կամ ճյուղավորված մազմուկներով: Տերևները՝ 5-7 մմ.երկարության, կիսազլանիկանման: Ծաղկում է հուլիս-սեպտեմբեր ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում:

Բուսատեսակի համար աճման լավագույն պայմաններ են հանդիսանում ստորին լեռնային գոտու 800 – 1200 մ.բարձրությունների վրա ձևավոնված կիսանապատային, քարքարոտ գիպսակիր, կավային հողային պայմանները:

Արմավիրի մարզում աճում է **Շահումյան ու Արմավիր** համայնքների վարչական տարածքներում:

Հանրապետությունում տարածված է նաև Զովաշեն, Գառնի, Էրախ, Վեդի և **Արևշատ** համայնքների վարչական տարածքներում:

Հայաստանի Հանրապետությունից բացի աճում է Նախիջևանում, Հյուսիսային Իրանում, Աֆղանստանում և Թուրքմենստանում:

Վտանգված բուսատեսակ է:

19.Գազ տարօրինակ–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Լոբազգիներին պատկանող, բազմամյա մերկ բույս է: Ստորգետնյա խիստ կարճացած ցողուններով, փաթաթված մահացած տերևների թելանման մնացորդներով:Տերևները՝ 4-20սմ. երկարության, տերևիկները՝ 5-6 ակն գույգ:Ծաղիկները՝ 2-3 հատ, պսակը՝ սպիտակ մանուշակագույն երանգով: Ծաղկում է ապրիլ- մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս- հունիսին:

Բուսատեսակի համար աճման լավագույն պայմաններ են հանդիսանում ստորին լեռնային գոտում՝ 800 – 1000 մ.բարձրությունների վրայի, ձևավոնված անապատային և կիսանապատային ավազուտերը

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում

Արմավիրի մարզում աճում է **Էջմիածին /Զվարթնոց/** համայնքի վարչական տարածքում:

Հանրապետությունում տարածված է նաև Երախ և Ենգիջա համայնքների վարչական տարածքներում:

Հայաստանի Հանրապետությունից բացի աճում է Նախիջևանում, Հյուսիսային Իրանում և Արևելյան Անատոլիայում:

Վտանգված բուսատեսակ է:

20.Մատուտակ խոզանավոր–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Լոբազգիներին պատկանող, 80-100սմ.բարձրության, ճյուղավորված ցողուններով, 5-12 սմ.երկարության տերևներով, բազմամյա խոտաբույս է: Տերևիկները՝ 3-6 գույգ, էլիպսաձև, ծաղկաբույլը՝ խիտ, գնդաձև կամ օվալաձև, ծաղկեպսակը՝ բաց մանուշակագույն: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-օգոստոսին:

Բուսատեսակը աճում է ստորին լեռնային գոտում՝ 800 – 900 մ. բարձրությունների վրա, գետերի և առուների ափերին:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Երևանի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Արմավիր մարզում հայտնի է **Էջմիածին և Առատաշեն /Զեյվա/** համայնքների վարչական տարածքներում:

Հանրապետությունում տարածված է նաև Միս և Լեհվազ համայնքների վարչական տարածքներում:

Հայաստանի Հանրապետությունից բացի աճում է Միջին Եվրոպայում, Կովկասում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Իրանում Անատոլիայում, Արևմտյան Սիբերում և Միջին Ասիայում:

Խեցելի բուսատեսակ է:

21.Սֆերոֆիզա աղուտային–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Լոբազգիներին պատկանող, 30-100 սմ.բարձրության, ուղղաձիգ ցողուններով, կենտ փետրաձև տերևներով, բազմամյա խոտաբույս է: Տերևիկները՝ 6-11 գույգ, թավոտ, առսեղմ, էլիպսաձև, թավոտ, բուր զագաթով: Ծաղկաբույլը՝ 7-15 ծաղիկներով,պսակը՝ ծիրանագույն,10-12 մմ. երկարության, Պտուղը՝ ունդ է, երկար, ոտիկի

նման, փքված, մերկ ու թաղանթային՝ 2,0-2.5 սմ. երկարության: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Բաուսատեսակը աճում է ստորին լեռնայի գոտում՝ 800 – 900 մ. բարձրությունների վրա, աղկալած ճահիճներում, գետերի և առուների ափերին:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում/Արարատի և Արմավիրի մարզերում/:

Արմավիր մարզում տարածված է բոլոր համայնքների վարչական տարածքներում:

Հայաստանի Հանրապետությունից բացի աճում է Ռուսաստանի դաշնության Եվրոպական մասի հարավում, Միջին Ասիայում, Ղազախստանում, Իրանում, Աֆղանստանում, Ալթայում, Տուվայում և Մոնղոլիայում:

Խոցելի բուսատեսակ է:

22.Հացահամեմ գլխիկավոր–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Լոբազգիներին պատկանող, 20-50 սմ. բարձրության, երկարավուն տերևիկներով, երկար ծաղկակիրների վրա նստած ծաղկաբույլերով, սպիտակ-մանուշակագույնի սովոր պսակով, մերկ, ձվաձև ունդերով՝ մեկ սերմով, սնամեջ, ճյուղավորված ցողուններով, միամյա խոտաբույս է: Ծաղկում է հունիս ամիսին, պտղաբերում՝ հուլիսին:

Բաուսատեսակը աճում է ստորին լեռնայի գոտում՝ 800 – 900 մ. բարձրությունների վրա, ճահիճներում, գետերի և առուների ափերին:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում :

Արմավիր մարզում հայտնի է **Խորոնք և Առատաշեն /Զեյվա/** համայնքների վարչական տարածքում :

Բուսատեսակը աճում է նաև Արարատի մարզի Մխչյան համայնքի վարչական տարածքում:

Հայաստանի Հանրապետությունից բացի տարածված է Անատոլիայում, Հյուսիսային Իրանում և Արցախում:

Վտանգված բուսատեսակ է:

23.Տուղտավարդ Սոֆիայի–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Փիփերտազգիներին պատկանող, 30-100 սմ.բարձրության, աստղաձև, մազիկներով ծածկված, երկու կողմից միագույն, կլորավուն, հինգ թեթևակի հատված բլթակներ ունեցող տերևներով, հնգատիպ, սպիտակավուն պսակաթերթերով, մեծ ծաղիկներով և երիկամաձև սերմերով բույս է: Ծաղկում է հունիս- օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս- սեպտեմբերին:

Բաուսատեսակը աճում է միջին լեռնայի գոտում՝ 1300 - 1800 մ. բարձրությունների վրա, լեռնային տափաստաններում, չոր ու քարքարոտ վայրերում և ժայռերի ձեռքերում :

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է Երևանի և Շիրակի ֆլորիստիկական շրջաններում :

Արմավիր մարզում հայտնի է միայն **Քարակերտ** համայնքի վարչական տարածքում:

Բուսատեսակը տարածված է նաև Թալին, Պեմզաշեն, Բագրավան, Մաստարա, Թաթուլ համայնքների վարչական տարածքում և Հրազդան գետի ափին:

Հայաստանի Հանրապետությունից բացի տարածման արեալը ընդգրկում է Հարավարևմտյան Անդրկովկասը, Հյուսիսարևելյան Անատոլիան:

Վտանգված բուսատեսակ է:

24.Ջրահարս փոքր–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Ջրահարսազգիներին պատկանող, ջրային, սուզված կամ լողացող, խիտ ճյուղավորված ցողուններով, միամյա բույս է: Տերևները՝ օղակադիր, դեղնականաչավուն տերևաթիթեղով, եզրերից՝ բավականին խոշոր, հիմքի մոտ հեռացած աստամիկներով: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս- օգոստոսին:

Բուսատեսակը աճում է միջին լեռնայի գոտում՝ 1300 - 1800 մ. բարձրությունների վրա, լեռնային տափաստաններում, չոր ու քարքարոտ վայրերում և ժայռերի ձեռքերում :

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է Երևանի և Ապարանի ֆլորիստիկական շրջաններում:

Արմավիր մարզում հայտնի է միայն **Էջմիածնի համայնքի** վարչական տարածքում:

Բուսատեսակը տարածված է նաև Մասիս և Աղավնաձոր համայնքների վարչական տարածքում՝ Մարմարիկ գետակի ձախափին:

Այս բուսատեսակի տարածման արեալը բավականին ընդարձակ է, ընդգրկում է Արևմտյան Նախակովկասում, Արևելյան և Հարավային Անդրկովկասը ու Թալիշը, Եվրոպան, Արևմտյան Սիբիրը, Եվրոպան, Իրանը, Փոքր, Միջին և Արևելյան Ասիան, Հնդկաստանը և Հյուսիսային Աֆրիկան:

Խոցելի բուսատեսակ է:

25.Բորակաթուփ Շոբերի–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Բորակաթուփազգիներին պատկանող, 50-200 սմ. բարձրության, լավ ճյուղավորված, սպիտակ կեղևով, փշոտ ու չոլած ճյուղերով, բույս է: Հերթադիր, պարզ, մսալի և երկարավուն թիաձև տերևներով, կարճ ոտիկավոր դեղնականաչավուն գույնի ծաղիկներով, մուգ դարչնագույն կամ մուգ կարմրավուն պտուղներով: Ծաղկում է մայիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

Բուսատեսակը աճում է ստորին լեռնային գոտում՝ 700 – 800 մ. բարձրությունների վրա, հիմնականում խոնավ աղուտներում:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է Երևանի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Արմավիրի մարզում աճում է **Արգավանդ, Մարգարա, Արագափ և Երասխահուն** համայնքների վարչական տարածքներում:

Բուսատեսակը տարածված է նաև Մեղրու տարածաշրջանում՝ Արաքս գետի ողողադաշտում:

Այս բուսատեսակի տարածման արեալը ընդգրկում է Արևմտյան Նախակովկասը, Արևելյան Կովկասը, Կենտրոնական և Արևմտյան Անդրկովկասը, Հարավարևելյան Եվրոպան, Իրանը, Միջին Ասիան:

Վտանգված բուսատեսակ է:

26.Խոնդատ մերկացողուն–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Խլածաղկազգիներին պատկանող, 15-70սմ.բարձրության, արմատամերձ տերևները՝ փետրաձև հատված, նշտարաձև կամ երկարավուն սեզմենտներով, դեղնապսակ, ողկույզանման ծաղկաբույլով, բազմամյա բույս է: Ծաղկում է հունիս ամիսին, պտղաբերում՝ հուլիսին:

Բաուսատեսակը աճում է ստորին լեռնայի գոտում՝ 700–1000 մ. բարձրությունների վրա, չոր քարքարոտ լանջերին, կիսանապատային և ավազոտ հողային պայաններում:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում:

Արմավիրի մարզում հայտնի է միայն **Էջմիածին /Վաղարշապատ/** համայնքի վարչական տարածքում:

Բուսատեսակը տարածված է նաև Գոռավան, Վեդի և Ուշակերտ համայնքների վարչական տարածքներում:

Հայաստանի Հանրապետությունից բացի տարածման արեալը ընդգրկում է Արևելյան Անդրկովկասը, Արևելյան Անատոլիան, Նախիջևանը, Դաղստանը և Իրանը:

Վտանգված բուսատեսակ է:

27. Կարմրան ութառեջ–Բարձրակարգ բույսերի, Ծածկասերմերի դասի, Կարմրանազգիներին պատկանող, 2,0-2,5 մ. բարձրության , դեղնականաչավուն կեղևով ծառ է: Սաղարթը կազմված է բազմաթիվ ճիպոտանման ճյուղերից: Տերևները հերթադիր են, թեփանման, նստադիր, ողկույզները զարգանում են նախորդ տարվա ընձյուղների վրա՝ մինչև տերևների առաջանալը: Ծաղկում է մայիս ամիսին, պտղաբերում՝ հունիսին:

Բաուսատեսակը աճում է ստորին լեռնայի գոտում՝ 700 – 1100 մ. բարձրությունների վրա, հիմնականում խոնավ աղուտներում, գետերի ափերին, ճահճացած մարգագետիններում:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է Երևանի և Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջաններում:

Արմավիրի մարզում աճում է միայն **Մարգարա** համայնքի վարչական տարածքում:

Հանրապետությունում տարածված է նաև Արարատ, Վեդի, Երասխ և Եղեգնաձոր ու Վայք համայնքների վարչական տարածքներում:

Աճում է նաև Արևելյան և Հարավային Անդրկովկասում ու Իրանում:

Վտանգված բուսատեսակ է:

**ԿԵՆՂԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ
/ՏԱՌԻՆԱ/**

Բուսական աշխարհում՝ ֆլորայում, կատարվող փոփոխությունները էական ազդեցություն են ունենում նաև ֆաունայի՝ կենդանական աշխարհի, կենսապայմանների ապահովման և տեսականու պահպանման գործում:

Երկիր մոլորակի ֆաունան իր տեսականու և ընդհանուր գլխաքանակի առումով էապես զիջում է ֆլորային: Այս գործում իր մեծ ներդրումն ունի նաև մարդ արարածը: Իսկզբանե իր առօրյա հոգսերը թեթևացնելու, օրախնդիր հարցերը լուծելու համար մարդը միշտ ձեռքը մեկնել է կենդանական աշխարհի գաձարանը և շատ հաճախ շոայլել այդ անգին հարստությունը: Վայրի կենդանական աշխարհը իր շահերին ծառայեցնելու գործընթացում առաջացան որսորդություն, որս և որսկան հասկացությունները: Որսորդությունը սկզբնական շրջանում մարդու սննդի հարցերն էր լուծում, բայց հետագայում այն դարձավ նաև մարդու հաճույքի բավարարման և ժամանցի միջոց. .մեկին՝ խաղ, մյուսին՝ մահ: Մպանել հաճույքի համար: Մարդու էությանը անհարիր հասկացություններ և իրողություններ, որոնք հաճախ են ուղեկցում մարդուն: Առկա փաստերի վերլուծությունը վկայում է, որ նման գործելաձևով մարդկությունը՝ վայրի կենդանական աշխարհը ոչնչացնելու <<առաջընթացին>> քիչ ժամանակահատված է մնում՝ <<տեղ հասնելու>>, բայց ուր: Անկենդան աշխարհ:

Վայրի կենդանական աշխարհի առկայությունը մարդու համար կենսական անհրաժեշտություն է, յուրաքանչյուր կենդանատեսակ ունի իր ուրույն դերն ու նշանակությունը ինչպես բնության համակեցության մեջ, այնպես էլ մարդու գեղագիտական ու հոգևեր ներշնչանքի ձևավորման և տնտեսական գործունեության կազմակերպման բնագավառում:

Մեծ Վարպետը՝ Ավետիք Իսահակյանը, լինելով մեծ բնասեր, ասել է <<... առհասարակ հոգատարությունը վայրի կենդանիների նկատմամբ ժողովրդի կուլտուրականության չափանիշն է...>>:

Բարձր գնահատելով կենսաբազմազանության դերը մարդկային հասարակության կենսաապահովման գործում, համաաշխարհային մասշտաբով մեծ ջանքեր է գործադրվում էկոհամակարգերի ու նրանցում՝ կենսաբազմազանության, պահպանման համար: Բայց մարդու գործունեության արդյունքում, առանձնապես վերջին հարյուրամյակի ընթացքում, նկատվում է երկիր մոլորակից ֆաունայի և ֆլորայի առանձին տեսակների անհետացում, որը էլ ավելի հրատապ խնդիր է դարձրել կենսաբազմազանության պահպանում:

Յուրաքանչյուր երկիր պատասխանատվություն է կրում իր տարածքում առկա կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման համար: Այդ շատ կարևոր գործին է ծառայում Կարմիր գիրքը:

Հայաստանը լինելով լեռնային երկիր, ցայտուն արտահայտված բարձրունքային գոտիականությամբ՝ գտնվելով ծովի մակերևույթից 375-4090մ. բարձրության վրա, առանձնահատուկ կտրտված լանդշաֆտը, նպաստավոր պայմաններ է ստեղծել կենդանական աշխարհի բազմազան տեսակների առաջացմանը: Մեր երկիրը հանդիսանում է բազմաթիվ կենդանատեսակների միակ վայրը իրենց կենսաձևի ծագման ու պահպանման համար:

Մեր հանրապետության կենդանիների Կարմիր գիրքի առաջին հրատարակումը եղել է 1988 թվականին, երկրորդը իրականացվել է 2010 թվականին՝ 2007-2009թթ. կատարված նոր դաշտային ուսումնասիրությունների և Կարմիր գրքի առաջին հրատարակումից հետո կուտակված տվյալների հիման վրա:

<< Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրք>>-ը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 29.01.2010 թ. թիվ 71-Ն որոշմամբ:

Մեզանից յուրաքանչյուրը պարտավոր է իմանալ և մտահոգվել, որ << Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրք>>-ը իր մեջ ներառում է 153 տեսակի ողնաշարավոր կենդանիների տեսակներ,

որից.

- ոսկրային ձկներ՝ 7 տեսակ,
- երկէնցաղներ՝ 2 տեսակ,
- սողուններ՝ 19 տեսակներ,
- թռչուններ՝ 96 տեսակներ,
- կաթնասուններ՝ 29 տեսակներ:

Կաթնասուններից՝ 6, ձկներից՝ 4 և 53 տեսակ մողեսների մեծամասնությունը էնդեմիկ են:

Գրքում ներառնված են 155 տեսակի անողնաշարավոր կենդանիներ,

որից.

- փորոտանիներ՝ 16 տեսակ,
- միջատներ՝ 139 տեսակ:

Գրքում նշվում է, որ շուրջ 316 անողնաշարավոր կենդանիներ հանդիսանում են էնդեմիկ՝ աշխարհի մեկ այլ տարածքում նրանք չեն հանդիպում, միաժամանակ նշվում է, որ 300-ից ավելի հազվագույտ ու անհետացող տեսակների առկայությունը:

ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված կենդանիների տեսակները բաժանվել են վեց խմբերի.

- 1.անհետացած տեսակ/EX/,
- 2.տարածաշրջանում անհետացած տեսակ/RE/,
- 3.կրիտիկական վիճակում գտնվող տրեսակ/CR/,
- 4.վտանգված տեսակ/EN/,
- 5.խոցելի տեսակ/VN/,
- 6.տվյալների անբավարարություն/DD/:

Կենդանիների Կարմիր գրքի առաջին հրատարակման ժամանակ Արմավիրի մարզի տարածքում բազմացող, բնադրող և չուի ընթացքում ժամանակվոր կացարան ընտրած կենդանատեսակներ թվաքանակը կազմում էր 38, որից 26-ը՝ թռչուններ, 6-ը՝ կաթնասուններ և 6-ը՝ սողուններ, իսկ երկրորդ հրատարակման Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակները հասել են 85, որից՝ 19-ը անողնաշարավորներ են, այդ թվում 17-ը՝ միջատներ, ողնաշարավոր կենդանատեսակները կազմում են 66 հատ, որից չորսը՝ ձկներ են, երեքը՝ սողուններ, չորսը՝ օձեր, 49-ը՝ թռչուններ և վեցը՝ կաթնասուններ, այսինքն, երկու տասնամյակի ընթացքում անհետացման եզրին հայտնված կենդանիների տեսակների թվաքանակը երկու անգամ ավելացել են, :

Անհետացման եզրին հայտնված կենդանատեսակները ըստ պատկանելիության ներկայացվում է Ձեր ուսումնասիրությանը և ճանաչմանը.

**ԱՆՈՂՆԱՇԱՐ ԿԵՆՂԱՆԻՆԵՐ
ՓՈՐՈՏԱՆԻՆԵՐ
Սկավառակատանիներ**

1. Ակրամովսկու շաղինիա - << Կրիտիկական վիճակում գտնվող>> տեսակ է:
Հայաստանի Հանրապետությունում հայտնի է Մեծամոր գետի
ակունքներում՝ Առատաշեն համայնքի վարչատարածքում և Արարատի մարզի
Արևարույր ու Ջրահովիտ գյուղերի շրջակայքում:
Հայաստանի Հանրապետությունից բացի հանդիպում է Իրանում և Իրաքում:

Նստաաչքավորներ

2. Սպիտակաբերան խխունջ - << Կրիտիկական վիճակում գտնվող>> տեսակ է:
Հայաստանի Հանրապետությունում հայտնի է միայն Փարաքար համայնքի
վարչատարածքում:
Հայաստանից բացի այս տեսակը հանդիպում է Եվրոպայում, Ռուսաստանի
դաշնությունում՝ Սիբիրում և Լենա գետի ավազանում:

**ՄԻՋԱՏՆԵՐ
Ճպուտներ**

3. Սիմպեկմա ճպուտ - << Խոցելի>> տեսակ է:
Արմավիրի մարզում հայտնի է **Բազարան** գյուղի վարչատարածքում:
Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է նաև Արարատի, Տավուշի,
Արագածոտնի, Կոտայքի, Վայոց ձորի մարզերում, Երևան քաղաքի շրջակայքում և
<<Խոսրովի անտառ>> պետական արգելանոցի տարածքում:

Կենդանատեսաը տարածված է 900-2000 մ. բարձրություններում՝ լճակներում և
ջրամբարներում:

Հայաստանից բացի տարածված է Կենտրոնական և Հյուսիսային Եվրոպայից մինչև
Ճապոնիա, Արաջավոր Ասիայում և Կովկասում:

4. Վան Բրինկի նետիկ – Ընդգրկված է << Անբավարար տվյալներ>> խմբում:
Արմավիր մարզում հայտնի է **Տարոնիկ** համայնքի վարչատարածքում:
Հայաստանի Հանրապետությունում տարածված է նաև Արարատի, Շիրակի, Սյունիքի
մարզերում և Երևան քաղաքի շրջակայքում:
Հայաստանից դուրս հանդիպում է Վրաստանում, Թուրքիայում և Իրանում:

5 Լինդենի նետիկ - << Վտանգված>> տեսակ է:

Հայաստանի Հանրապետությունում և Արմավիրի մարզում հայտնի է միայն **Տարոնիկ** համայնքի վարչատարածքում:

Հայաստանից բացի տարածված է նաև Հարավային Եվրոպայում, Հյուսիսային Աֆրիկայում, Անդրկովկասում, Փոքր Ասիայում և Կովկասում:

6.Թամբակի ճյուղ- <<Վտանգված>> տեսակ է:

Արմավիր մարզում հայտնի է **Եղեգնուտ, Արաքս, Արագափ, Մարգարա** համայնքների վարչական տարածքներում,:

Հանրապետությունում հանդիպում է նաև Արարատի մարզում/Արարատ քաղաքի շրջակայքում/:

Հայաստանից բացի տարածված է Վրաստանում, Հյուսիսային Աֆրիկայում, Միջերկրական ծովի երկրներում, Միջին Ասիայում, Կովկասում:

Բնադրում և բազմանում է կիսանապատային գոտու, տաք, ջրամբարներում և լճերում:

7 Ուրաղի ճյուղ - << Վտանգված>> տեսակ է:

Հայաստանի Հանրապետությունում և Արմավիր մարզում հայտնի է միայն **Մարգարա** համայնքի վարչատարածքում:

Հայաստանից բացի հանդիպում է Վրաստանում, Թուրքիայում, Միջին Ասիայում, Իանում և Սիրիայում:

Ուղղաթևեր

8.Ֆիտոդրիմադուզա հայկական - << Վտանգված>> տեսակ է:

Արմավիր մարզում հայտնի է **Շենավան** համայնքի վարչատարածքում:

Հայաստանի Հանրապետությունում տարածված է նաև Արարատի և Սյունիքի մարզերում:

Հայաստանի Հանրապետությունից բացի այս տեսակ տարածված է նաև Նախիջևանում:

Տեսակը տարածում ունի մինչև 1100 մ. բարձրությունների վրա՝ կիսանապատներում աճող բուսատեսակներով ծածկված տարածքներում:

9 Սատունիի սկոտոդրիմադուզա - << Կրիտիկական վիճակում գտնվող>> տեսակ է:

Հայաստանի Հանրապետությունում և Արմավիր մարզում հայտնի է միայն **Փարաքար** համայնքի վարչատարածքում և **Մեծամոր լճի շրջակայքում**:

Հայաստանից բացի տարածված է նաև Հյուսիսային Իրանում և Նախիջևանում:

Կենդանիին բնադրում և բազմանում է կիսանապատային գոտու ցածրադիր տեղամասերում՝ 845-1100 մ. բարձրությունների վրա:

Հավասարաթևեր

10.Արարատյան որդան կարմիր - <<Կրիտիկական վիճակում գտնվող>> տեսակ է: Արմավիրի մարզի տարածքում կա միայն **Ջրառատ/18 հա/** և **Արագափ/200 հա/**

համայնքների վարչատարածքներում: Կենդանատեսակի պահպանության համար մարզում ստեղծվել է « Որդան կարմիր » միակ պետական արգելանոցը:

Արարատյան հարթավայրի էնդեմիկ տեսակ է:

Ապրում է կերային բույսերի՝ որդանախոտի և եղեգի առկայության պայմաններում՝ աղուտներում:

Կարծրաթևեր կամ բզեզներ

11. Հայկական բնդեմիկ - « Անհետացած » տեսակ է:

Հայաստանի էնդեմիկ տեսակ է:

Հայաստանում և Արմավիր մարզում հայտնի էր **Էջմիածնի և Փարաքար** համայնքների վարչական տարածքներում: Վերջին անգամ հայտնաբերվել է 1932 թվականին:

12 Ռուբենյանի բնդեմիկ - « Վտանգված » տեսակ է:

Հայաստանի էնդեմիկ տեսակ է:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է Արարատի/Արմաշ/ և Արմավիր մարզի տարածքում/ **Արաքս գետի** շրջակայքում/:

Ապրելավայրը՝ Արարատյան հարավայրի աղուտները:

13. Ռեյթերի հացարգեզ - « Վտանգված » տեսակ է:

Արմավիր մարզում հայտնի է եղել միայն **Էջմիածին** համայնքի վարչատարածքում և **Արաքս գետի հովտում**: Անհետացել է: Ներկայումս հայտնաբերվել է « Էրեբունի » արգելոցի տարածքում՝ Գոռավանի ավազուտներում և Երասխի շրջակայքում:

Կենդանատեսակը տարածված է Արաքս գետի հովտում/Թուրքիա՝ Անի և Նախիջևան:

Բնակվում է կիսանապատներում և անապատային ավազուտներում՝ խոտածածքում փետրախոտի առկայության պայմաններում:

14. Կովկասյան փարավոն - « Կրիտիկական վիճակում գտնվող » տեսակ է:

Հայաստանի էնդեմիկ տեսակ է:

Արմավիր մարզում հայտնի էր **Էջմիածնի և Փարաքար** համայնքների վարչատարածքներում: Որտեղից անհետացել է: հանրապետությունում ներկայումս հանդիպում է Գոռավանի ավազուտներում՝ Վեդի քաղաքի մոտ:

15. Զարդավոր չրխկան - « Խոցելի » տեսակ է:

Արմավիր մարզում հայտնի է **Փշատավան** համայնքի վարչական տարածքում:

Հանրապետությունում հանդիպում է նաև Տավուշի և Սյունիքի մարզերում:

Հայաստանից բացի տարածված է Անդրկովկասում, Առաջավոր և Միջին Ասիայում, Իրանում, Աֆղանստանում, Իրաքում և Արաբական թերակղզում:

Կենդանին բազմանում է հոսող ջրերի ափերին:

16. Նմանաձև ծաղկեփոշեկեր - « Վտանգված » տեսակ է:

Հայաստանի Հանրապետությունում և Արմավիրի մարզում հայտնի է **Արաքս գետի** ափին՝ **Մարգարա** և **Արաքս համայնքների վարչակա տարածքներում**: **Ենդադրվում է կենդանատեսակի տարածումը նաև Անաքս գետի թուրքական ափամերձ հատվածում**: **Կենդանին սնվում է Արաքս գետի երկյանքով աճող տուգայան բուսականությամբ**:

Թաղանթաթևեր

17.Մեղու Դեսեպտորիա - << Խոցելի>> տեսակ է:

Արմավիր մարզի տարածքում հայտնի Մուսալեռ համայնքի շրջակայքում՝ Երևան տանող ճանապարհին հարող հողատարածքներում:

Հանրապետությունում այս տեսակից կա նաև <<Խոսրովի անտառ>>արգելանոցում:

Հայաստանից բացի հանդիպում է Հարավային Եվրոպայում, Անդրկովկասում և Միջին Ասիայում:

Կենդանին ապրում է անապատներում, կիսանապատներում, մարգագետիններում, անտառեզրերում և գետամերձ հովիտներում:

Երկթևեր

18.Հսկա գիշաճանճ - << Խոցելի>> տեսակ է:

Արմավիր մարզում հայտնի **Մարդարապատ** համայնքի վարչատարածքում:

Հանրապետությունում հանդիպում է նաև Արարատի մարզում/Մասիս, Վեդի, Արմաշ, Գոռավան, Սուրենավան/:

Հայաստանից բացի տարածված է Անդրկովկասում, Ղազախստանում, Միջին Ասիայում, Հյուսիսային Աֆրիկայում, Իրանում, Մոնղոլիայում և Հյուսիսային Չինաստանում:

Կենդանին բազմանում է կիսանապատներում և անապատներում:

ՈՂՆԱՇԱՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ Ոսկրային ձկներ

19. Հաշամ –<< Խոցելի>> տեսակ է:

Արմավիր մարզում հայտնի է Արաքս և Մեծամեր գետերում:

Հանրապետությունում հանդիպում է նաև Որոտան և Ախուրյան գետերում:

Կենդանատեսակի տարածվածությունը ընդգրկում է Քուռ և Արաքս գետերի ջրավազանները և Կասպից ծովը:

Ծածանակերպեր

20.Հայկական կարմրակն - << Վտանգված>> տեսակ է:

Արմավիր մարզում հայտնի է **Մեծամոր գետում** և նրա հետ կապված ջրանցքներում և լճերի համակարգում:

Հայաստանում էնդեմիկ տեսակ է:

21.Քուռի քարթակ - << Տվյալների անբավարություն>> կատեգորիան:

Արմավիր մարզի և Հայաստանի Հանրապետության բոլոր գետերում տարածված է եղել, բացի Սևանալճի ավազանից:

Կենդանատեսակի տարածվածության արեալը ընդգրկում է Քուռ և Արաքս գետերի ավազանը, Ուրմիա լճի վտակը՝ Հադերչայը:

22.Առաջավորասիական ծական-<< Տվյալների անբավարություն>> կատեգորիան:

Հայաստանի Հանրապետությունում և Արմավիր մարզում տարածված է եղել **Արաքս գետի հեր կապված բոլոր ջրամբարներում**:

Կենդանատեսակի տարածվածության արեալը ընգրկում է Սև, Կասպից և Արալ ծովերի ջրամբարները:

ՍՈՂՈՒՆՆԵՐ Կրիաներ

23 Միջերկրածովային կրիա - << Խոցելի>> տեսակ է:

Տարածված է **Արարատյան** հարթավայրում:

Մողեսներ

24. Երկարաոտ սցինկ - << Խոցելի>> տեսակ է:

Տարածված է **Արարատյան** հարթավայրում՝ **Արաքս գետի** հովտում:

25.Անդրկովկասյան մողեսիկ - << Կրիտիկական վիճակում գտնվող>> տեսակ է:

Հայտնի է **Արաքս գետի ձախափնյա հովտում**՝ Էջմիածին քաղաքից արևմուտք մինչև Մեղրու լեռնաշղթայի Հարավային նախալեռները:

Օձեր

26.Անդրկովկասյան սահնոձ - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է հիմնականում **Արաքս գետի** հովտի նախալեռնային շրջանում:

27.Մատունինի սևագլուխ - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է հիմնականում **Արաքս գետի հովտի** նախալեռնային շրջանում՝ մինչև 1200 մ.:

28.Կովկասյան կատվաօձ - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է **Արաքս գետի** հովտում:

29. Հայկական լեռնատափաստանային իժ - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում 1200 -3000մ. բարձրության լեռնատափաստանային լանդշաֆտերում և բարձրադիր մարգագետիններում, Արմավիրի մարզի տարածքում անհետացել է՝ գրեթե չի հանդիպում:

Թռչուններ Սուձականմաններ

30. Մոխրաայտ սուզակ - << Խոցելի>> տեսակ է:

Չուի ընթացքում հանդիպում է **Արարատյան դաշտավայրի արհեստական լճակներում:**

Թիառայիններ

31. Մեծ ձկնկուլ - << Խոցելի>> տեսակ է:

Չուի ընթացքում հազվադեպ հանդիպում է **Արարատյան դաշտավայրի արհեստական լճակներում:** Որպես ձկնային տնտեսության վնասատու մինչև 1950 թ. ոչնչացվել է:

32. Փոքր ձկնկուլ - << Խոցելի>> տեսակ է:

Հազվադեպ հանդիպում է **Մեծամոր գետի** առափնյա եղեգնի բուսուտներում:

Տառեղանմաններ

33.Քաջահավ - << Խոցելի>> տեսակ է:

Մինչև 1950 ականները լայնորեն տարածված է եղել **Արաքս գետի հովտում**, ներկայումս հանդիպում է Մեծամոր գետի հովտում:

34.Տարգալակտուց - << Վտանգված>> տեսակ է:

1930-40 ականներին հանդիպում էր **Արաքս գետի հովտում**, ներկայումս Արմավիրի մարզի վարչատարածքում չի հանդիպում:

Ֆլամինգոյանմաններ

35.Սովորական Ֆլամինգո - << Տվյալների անբավարություն>> կատեգորիան: Տարածված է, որպես չվահյուր ՝ **Արաքս** համայնքի վարչատարածքում:

Սագանմաններ

36.Թշտան կարապ - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է չուի շրջանում՝ Արարատյան հարթավայրի լճակներում:

37. Ճչան կարապ - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է չուի շրջանում՝ Արարատյան հարթավայրի լճակներում:

38.Փոքր կարապ - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է չուի շրջանում՝ Արարատյան հարթավայրի Արաքս գետի հովտի լճակներում:

39.Սոխրագույն սագ - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է չուի շրջանում՝ Արարատյան հարթավայրի Արաքս գետի հովտի լճակներում:

40.Ծվվան սագ - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է չուի շրջանում՝ Արարատյան հարթավայրի Արաքս գետի հովտի լճակներում:

41. Սպիտակաճակատ սագ - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է չուի շրջանում՝ Արարատյան հարթավայրի Արաքս գետի հովտի լճակներում:

42.Կարմիր բաղ - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է Արարատյան հարթավայրի գերխոնավ տարածքներում :

43. Խայտաբաղ - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է Արարատյան հարթավայրի գերխոնավ տարածքներում:

44.Լայնակտուց բաղ - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է չուի շրջանում Արարատյան հարթավայրի գերխոնավ տարածքներում:

45. Մարմարյա մրտին - << Վտանգված>> տեսակ է:

Հանդիպում է Արարատյան հարթավայրի գերխոնավ տարածքներում:

Բազեյանմաններ

46. Գառնանգղ /մորուքավոր անգղ/ - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է Արմավիրի մարզի ամբողջ տարածքում:

47.Գիշանգղ - << Վտանգված>> տեսակ է:

Հանդիպում է Արմավիրի մարզի ամբողջ տարածքում:

48.Սպիտակագլուխ անգղ - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է Արմավիրի մարզի ամբողջ տարածքում:

49.Տափաստանային արծիվ - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է Արմավիրի մարզի ամբողջ տարածքում:

50.Քարարծիվ - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է Արմավիրի մարզի ամբողջ տարածքում:

51. Ջրարծիվ - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է Արարատյան հարթավայրի Արաքս գետի հովտի լճակներում:

52. Տափաստանային հողմավար բազե - << Խոցելի>> տեսակ է:

Տեղ- տեղ բնադրում է **Արաքսի հովտում**:

53. Կարմրավոտ բազե - << Խոցելի>> տեսակ է:

Դասվում է Հայաստանի բնադրող, չվող թռչունների թվին: Հանդիպում է Արմավիրի և **Էջմիածնի նախկին շրջանների** վարչատարածքում:

54. Աղավնաբազե - << Տվյալների անբավարություն>> կատեգորիան:

Տարածված է, որպես չվահյուր **Արաքս համայնքի վարչատարածքում** և **Արաքս գետի հովտում**:

55. Բալոբան - << Վտանգված>> տեսակ է:

Հայաստանում նստակյաց, բնադրող տեսակ է, հանդիպում է **Էջմիածնի նախկին շրջանի** վարչատարածքում:

Կռունկանմաններ

56. Գեղանի կռունկ - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է Արմավիրի **մարզի ամբողջ** տարածքում՝ աշնանային և գարնանային չուի շրջանում:

57. Սուլթանական հավ-<< Տվյալների անբավարություն>> կատեգորիան:

Հանդիպում է **Արաքս գետի հովտում**:

58. Մեծ արոս - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է **Արմավիրի և Բաղրամյանի նախկին շրջանների** վարչատարածքում:

Քարդրանմաններ

59. Կոցար – կաչաղակ - << Խոցելի>> տեսակ է:

1930-40 ական թվականները Հայաստանում հանդիպել է ամենուր, ներկայումս չվահյուր է **Արաքսի գետի հովտում**:

60. Ծովային քարադր - << Խոցելի>> տեսակ է

Բնադրում է **Արմավիր քաղաքի** շրջակայքում:

61. Հաստակտուց քարադր - << Վտանգված>> տեսակ է:

20 – երորդ դարի սկզբին բնադրել է **Սարդարապատի տափաստանում**:

62. Ճախրուկ - << Վտանգված>> տեսակ է:

Եզակի առանձնյակներ հանդիպում են **Արաքս գետի հովտում**:

63. Մեծ իլիկակոցար - << Խոցելի>> տեսակ է:

Գարնանային և աշնանային չուի շրջանում հանդիպում է **Արարատյան հարթավայրում**:

64. Մեծ արորիկ - << Խոցելի>> տեսակ է:

Գարնանային և աշնանային չուի շրջանում հանդիպում է **Արարատըան հարթավայրի** գերիտնավ վայրերում:

65. Կրկնակոցար - << Խոցելի>> տեսակ է:

Գարնանային և աշնանայի չուի շրջանում հանդիպում է **Արարատրան հարթավայրի ջրամբարների ափամերձ տարածքներում:**

66.Ոսնացուպիկ - - << Խոցելի>> տեսակ է:

Հիմնականում բնադրում է **Արարատյան հարթավայրում:**

67.Բզակտուց - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է **Արաքս գետի հովտում:**

68.Մարգագետնային ծիծառակոցար - - << Խոցելի>> տեսակ է:

Չուի ընթացքում հանդիպում է Արմավիրի մարզի ամբողջ տարածքում:

Բնադրավայրեր հայտնաբերվել են **Տարոնիկ** համայնքի վարչատարածքում:

69.Տափասատնային ծիծառակոցար - << Խոցելի>> տեսակ է:

Չուի ընթացքում հանդիպում է Արմավիրի մարզի **ամբողջ տարածքում:**

70.Հայկական որոր - << Խոցելի>> տեսակ է:

Վերջին տարիներին հանդիպում է Արարատյան հարթավայրի ձկնաբուծարանների մոտակայքում/ **Արաքս** համայնքում/:

71.Փոքր ջրածիծառ - << Խոցելի>> տեսակ է:

Բնադրում է Արմավիրի մարզի **ձկնաբուծական լճակների շրջակայքում:**

72.Սպիտակաայտ ջրածիծառ - << Խոցելի>> տեսակ է:

Բնադրում է Արմավիրի մարզի **ձկնաբուծական լճակների շրջակայքում:**

73.Սևափոր դուլն - << Խոցելի>> տեսակ է:

Բնադրում է Արմավիրի **մարզի ձկնաբուծական լճակների շրջակայքում:**

Բվանմաններ

74.Բվեճ-<< Խոցելի>> տեսակ է:

Բնադրում է Արմավիր **մարզի ձկնաբուծական լճակների շրջակայքում:**

Ներկարանմաններ

75.Ներկարար - << Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է Արմավիրի մարզի **կիսանապատային գոտում:**

Ճնճողականմաններ

76.Կարմրակատար շամփրուկ-<< Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է Արմավիրի **մարզի կիսանապատային գոտում.**

77.Սպիտակափոր սոխակ-<< Տվյալների անբավարություն>> կատեգորիան:

Հանդիպում է Արմավիրի **մարզի կիսանապատային գոտում:**

78.Ժայռային դրախտապան-<< Խոցելի>> տեսակ է:

Հանդիպում է **Բաղրամյանի** տարածաշրջանում:

Կաթնասուններ

Միջատակերներ

79. Լայնականջ ոգնի-«Հազվադեպ հանդիպող տեսակ է» Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է Սյունիքի, Վայոց ձորի, Արարատի և արագածոտնի մարզերում: Արմավիրի մարզում նկատվել է Արմավիրի և Բաղրամյանի տարածաշրջաններում:

Ձեռքաթևավորներ

80. Մեհելիի պայտաքիթ չղջիկ - «*Խոցելի*» տեսակ է:

Հանդիպել է Էջմիածնի նախկին շրջանի վարչատարածքում՝ մինչև Արմավիր քաղաքի մոտակայքը:

81. Սովորական երկարաթև չղջիկ - «*Խոցելի*» տեսակ է:

Տարածված է Արմավիրի մարզի ամբողջ տարածքում:

Կրծողներ

82. Դալի ավազամուկ - «*Տարածաշրջանում անհետացած*» տեսակ է:

Ներկայումս չի հայտնաբերվել, նախկինում հանդիպել է Մարգարա համայնքի վարչատարածքում:

83. Փոքր ճագարամուկ - «*Վտանգված*» տեսակ է:

Հանդիպում է Արմավիրի մարզի ամբողջ տարածքում՝ 800-1200 մ. բարձրություններում:

Գիշատիչներ

84. Խայտաքիս - «*Խոցելի*» տեսակ է:

Հանդիպում է Արմավիրի մարզում՝ 1000 մ. բարձր տարածքներում:

85. Ջրասամույր - «*Վտանգված*» տեսակ է:

Հանդիպում է Արմավիրի մարզի գրեթե բոլոր տարածաշրջաններում:

ՎԵՐՋԱԲԱՆ

Համոզված եմ, որ Կարմիր գրքում գրանցված այսքան տեսակի բույսերի ու կենդանիների անուններ սահմանափակ թվով մարդիկ են լսել, իսկ տեսած և կճանաչեն հաս ու կենտ երջանիկ անհատներ:

Ցավով պետք է արձանագրել, որ Կարմիր գրքում գրանցված տեսակների պահպանման և տարածման ուղղությամբ մեզ մոտ գրեթե ոչինչ չի արվում: Կարմիր գրքում գրանցված, Արմավիրի մարզում տարածված 27 բուսատեսակներից միայն 13 տեսակներն էրի առանձին պոպուլացիաներ են, որ աճելով պետական արգելավայրերի տարածքում, քիչ, թե շատ պահպանված են, մնացած 15 տեսակները մնացել են բախտի քմահաճույքին, ով է նրանց պահպանելու, անհայտ է:

Էլ ավելի տարօրինակ իրավիճակ է ստեղծվել կենդանատեսակների պահպանության գործում: Երբ թերթում ես Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակին նկարագրող էջը՝ «Պահպանության իրականացվող միջոցառումներ» և «Պահպանության առաջարկվող միջոցառումները» բաժինները և կարդում՝ «Չեն իրականացվում», «Մշակված չեն» բառակապակցությունները, մնում ես զարմացած, իսկ ով պետք է այդ անի և երբ:

Բնապահպանական ցակնացած միջոցառումները, այդ թվում կենսաբազմազանության պահպանման հիմնախնդիրները, մեծ ներդրումներ են պահանջում, ներկայումս այն միայն պետական բյուջեյի միջոցներով իրականացնել հնարավոր չէ, այս գործում հասարակության լայն խավերի համագործակցությունն է անհրաժեշտ: Բնապահպանական այս մեծ գործում առաջամարտիկի դերը վերապահվում է հասարակական կազմակերպություններին:

Կենսաբազմազանության փրկության գործում շատ մեծ է բարեգործների դերը: Կարմիր գրքում գրանցված յուրաքանչյուր տեսակի պահպանության համար ներդրված դրամը, ներդրում է մեր հայրենիքի հզորացման, ազգաբնակչության բարեկեցության մակարդակի բարձրացման, շրջակա միջավայրի ու բնության անաղարտության պահպանման, յուրաքանչյուր կենդանի օրգանիզմի համար անհրաժեշտ թթվածնի չափաբաժնի ապահովման և գալիք սերունդների հարատևմանը:

Կենսաբազմազանության պահպանման գործին մեծ ներդրում կլինի հանրապետությունում բնասեր զբոսաշրջիկությամբ/էկոտուրիզմ/զարգացումը:

Եթե կարողանանք ինքներս ճանաչել, ուսումնասիրել և համապատասխան պայմաններ ստեղծել Հայաստանի Հանրապետության համար էնդեմիկ բուսական և կենդանական աշխարհի տեսակների պահպանման, բազմացման, տարածման համար և գիտահանրամատչելի ձևով ցուցադրել ու լուսաբանել զբոսաշրջիկներին և այն գովազդել ինչպես մեր երկրում, այնպես էլ արտասահմանում, այն կդառնա ուղիներից մեկը նոր աշխատատեղերի ստեղծման, ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացման,

բնապահպանական հիմնախնդիրների կարգավորման, նոր սերնդի դաստիարակման և մարդ էակի ու բնության մերձեցման գործում:

Ներկա տեսպետով ու առկա ճանապարհով ընթանալու դեպքում, գալիք սերունդներին ժառանգություն կթողնենք միայն գաղձին, պատատուկին, ագռավին, կաշաղակին, առնետին, մորեխին, կարիճին, մալարիայի մոծակին ու գենետիկական շեղումով ստացված կենսաձևերին:

Նախանձելի ժառանգություն է, որը յուրաքանչյուր բանական մարդուն մտահոգվելու, խորհելու տեղիք կտա:

Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակների մեծ քանակությունը, ոչ միայն մտահոգիչ է, այլև զարմանալի, ինչու ենք այսքան անտարբեր ու անխոհեմ մեզ ծնող ու սնող բնության հանդեպ: Հետևությունը մեկն է, մենք հեռացել ենք մեր Արարչից և մեզ շրջապատող բնությունից: Չհետևելով Աստծո խոսքին, հեռացել ենք նրանից և մեկուսացել:

Չուսումնասիրելով, չճանաչելով և չհասկանալով կենսաբազմազանության յուրաքանչյուր տեսակի, չիմանալով նրանց դերն ու նշանակությունը, ոչնցացնում ենք մեզ շրջապատող ֆաունայի ու ֆլորայի տեսակներին, խաթարում բնության ամբողջականությունը, նրա վերականգնողական ունակությունները, անդառնալի վնաս ենք հասցնում ինչպես բնությանը, այնպես էլ ինքներս մեզ:

Կցանկանայ, որ Հայաստանի Հանրապետության բույսերի և կենդանիների Կարմիր գիրքից ծաղկաքաղ արված` Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարածքում աճող, բնադրող, բազմացող կենդանական և բուսական տեսակները, ուսումնասիրվեն և ճանչվեն մարզի ամբողջ բնակչության կողմից:

Համայնքների ղեկավարները առաջինը իրենք պետք է ճանաչեն և տիրապետեն կարմիր գրքում գրանցված բուսատեսակների վերաբերյալ բերված տեղեկատվությանը, ապա հնարավոր բոլոր միջոցներով ազգաբնակչությանը տեղեկացնեն, լուսաբանեն այդ տեսակների պահպանության անհրաժեշտությունը: Այս առումով առանձնակի մեծ է նախադպրոցական հաստատությունների` մանկապարտեզների, դպրեցների ու մանկավարժների դերը` բնության պահպանության մարդասիրական այս մեծ գործում:

Կառաջարկելի դպրոցների տնօրեններին և կենսաբանության ուսուցիչներին` կարմիր գրքում գրանցված, մարզի տարածքներում տարածված, տեսակների գունավոր նկարները համապատասխան վերլուծականներով, փակցնել դպրոցի միջանցքներում:

Եթե դպրոցում չկա բնասերների խմբակ և համապատասխան անկյուն, ստեղծել: Ձևավորել` Կարմիր գրքում գրանցված, համայնքի տարածքում աճող ու բազմացող բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների բաժին: Բնասերների միջոցով կազմակերպել Կարմիր գրքում գրանցված տեսակների ուսումնասիրություն, նրանց պահպանման ու բազմացման համար նպաստավոր պայմաններ ստեղծել և համայնքի անդամներին տեղեկացնել ու ծանոթացնել անհետացման եզրին հայտնված տեսակներին և նրանց կեսագործունեության նորմալ պայմանների ապահովումը վերցնել դպրոցի հսկողության տակ: Դպրոցի բոլոր դասարաններում կազմակերպել Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հետ ծանոթացում և քննարկումներ:

Տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարության հետ համատեղ՝ դոնոր բարեգործներ փնտրելու Կարմիր գրքում գրանցված տեսակների պահպանության համար համապատասխան ծրագրեր մշակելու և այն իրագործելու նպատակով:

Անհրաժեշտ է աճող սերնդի մեջ սեր ու հետաքրքրություն սերմանել շրջապատի անաղարտության պահպանության, հատկապես անհետացող կենսաբազմազանության փրկության ու պահպանման ուղղությամբ:

Բնապահպանական այս շատ կարևոր գործում մեծ է նաև ժամանակակից տեղեկատվական հզոր միջոցի՝ համակարգչային, լուսաբանումների կազմակերպումը: Համացանցում առանձին էջ բացել և Կարմիր գիրքը հանրամատչելի միջոցներով ներկայացնել հանրությանը:

Այս և բնապահպանական ցանկացած հարցի պարզաբանման, լուսաբանման, տեղեկացման և միջոցառման կազմակերպման աջակցման համար մարզպետարանի բնապահպանության բաժին հայտնում է իր պատրաստակամությունը:

Միաժամանակ կցանկանայի խորին երախտագիտություն հայտնել Կարմիր գրքի երկրորդ հրատարակման կազմակերպիչներին, հետազոտողներին՝ իրենց ներդրած տիտանական աշխատանքի համար, և բոլոր նրանց ովքեր մասնակցել են այդ շատ կարևոր հայրենանվեր ու բնապահպանական անգնահատելի մեծ նախաձեռնությանը:

Միասին պայքարենք մեր շրջապատի մաքրության, բնության անաղարտության ապահովման, կենսաբազմազանության պահպանության, մեր մտքի ու հոգու հարստացման մարդասիրական ու բնապահպանական մեծ գործին:

Մեզանից յուրաքանչյուրը մայր բնության մի մասնիկն է: Բնության անաղարտության ապահովումը մեր կյանքի ու գալիք սերունդների բարեկեցության ապահովման հիմնաքարն է:

Սանասար Բաղդասարյան

30.01.2012թ.

